«Աջակցություն Հայաստանի Հանրապետության Կառավարությանը՝ ուղղված ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացմանը և ապագա Ասոցացման համաձայնագրի գծով նախապատրաստական աշխատանքներին՝ փուլ II»

Ընդհանուր տեղեկատվություն

Ոլորտ՝	Բազմաոլորտ
Տևողություն՝	5 տարի
Իրականացման ժամանակահատված՝	2012-2017
Ընդհանուր բյուջե՝	45 մլն. եվրո
Բյուջետային աջակցություն՝	36.8 մլն. եվրո
Լրացուցիչ աջակցություն՝	8.2 մլն. եվրո

Ծրագրի նկարագիր

Նպատակ. Աջակցել Հայաստանի կառավարությանը իրականացնելու իր ազգային ու ոլորտային ռազմավարությունները, որոնք կապված են ԵՀԳ Գործողությունների ծրագրում ամրագրված ընտրված առանցքային ոլորտների հետ՝ միաժամանակ աջակցելով առևտրին առնչվող բարեփոխումների իրականացմանն այնպես, ինչպես դրանք փոփոխվել են ԽՀԱԱՀ բանակցություններ չվարելու Հայաստանի որոշման արդյունքում, ինչպես նաև աջակցելով ընդհանուր տնտեսական կատարողականին կառավարման ու հաշվետվողականության շարունակական բարելավման շրջանակում:

Հատուկ նպատակներ.

***Նպատակ* I:** Շարունակել բարելավել Պետական ֆինանսական կառավարման համակարգերը:
***Նպատակ* II:** Աջակցել պետական ոլորտի թափանցիկության ու կատարողականի բարելավմանը, ներառյալ՝ էլ. Կառավարումը:
***Նպատակ* III:** Օժանդակել առևտրի ոլորտում կարգավորող դաշտի համապատասխանություն ԵՄ ու միջազգային պահանջներին, մասնավորապես՝ մաքսային, առևտրի տեխնիկական խոչընդոտներ ու սանիտարիայի, բուսասանիտարիայի հարցեր:
***Նպատակ* IV:** Աջակցել Հայաստանի Հանրապետության մարմիններին պայքարել կոռուպցիայի դեմ:
***Նպատակ* V:** Աջակցել Հայաստանի Հանրապետության մարմիններին քաղաքացիական ծառայության

բարեփոխումների հարցում:

<u>Բարեփոխումների շրջանակ.</u>

- Պետական ներքին ֆինանսական վերահսկողության շրջանակի բարելավում՝ Կենտրոնական ներդաշնակեցման բաժնի համար կազմակերպական ու գործառութային նախապատրաստությունների հզորացման միջոցով, ներքին աուդիտորների համար վերապատրաստման ու սերտիֆիկացման ծրագրի մշակում, Ֆինանսական կառավարման ու վերահսկողության ոլորտում բացերի վերհանում ու ռիսկերի գնահատման համար դրա կարողությունների հզորացում;
- Պետական գնումների ոլորտի հզորացում Պետական գնումների մասին օրենքի կիրարկման միջոցով՝ ընդունելով անհրաժեշտ ենթաօրենսդրական ակտերը, այդ ակտերի վերաբերյալ օգտագործողների համար ուղեցույցների մշակում և պետական գնումների մասնագետների համար որակավորված վերապատրաստումների անցկացում;
- Տվյալների պաշտպանության ու գաղտնիության բարելավում՝ համապատասխան Եվրոպական ստանդարտներին՝ Եվրոպայի Խորհրդի 108 Կոնվենցիայի վավերացման միջոցով, ու անձանց պաշտպանության մասին նոր օրենքի նախագծի մշակում՝ համապատասխան անձնական տվյալների ավտոմատ վերամշակման;
- Էլեկտրոնային կառավարման համակարգերի հզորացում ու ընդլայնում՝ ներդնելով Էլեկտրոնային արխիվների տեղեկատվական համակարգ, դրա անվտանգության, ֆունկցիոնալության և մրցունակության ապահովում, ինչպես նաև բարելավելով Քաղաքացիական ակտերի գրանցման կենտրոնական ու տարածքային բաժինների տեխնիկական ու մասնագիտական կարողությունները;
- Ճանապարհորդական փաստաթղթերի անվտանգության բարելավում կենսաչափական անձնագրերի ներդրման միջոցով;
- Մաքսային օրենսդրության, քաղաքականության ու վարչարարության բարելավում՝ համապատասխան ԵՄ համընդհանուր օրենսդրության՝ կատարելով անհրաժեշտ թարմացումներ Մաքսային վարչարարության ռազմավարության մեջ, բարձրացնելով մաքսային աշխատողների գիտելիքները Մաքսային գնահատման գործարքի արժեքի մեթոդի առաջնային կարևորության ու Մաքսային գնահատման բոլոր մեթոդների կիրառման մասին, և Հայաստանին մուտքի հնարավորություն տրամադրելով Մաքսային ընթացակարգերի պարզեցման ու ներդաշնակեցման մասին կոնվենցիային, մշակելով ու ներդնելով Մաքսային ռիսկերի կառավարման համակարգը և դրան առնչվող վարչական կառուցվածքները;
- Առևտրի տեխնիկական խոչընդոտների կրճատում՝ համապատասխան օրենսդրության ընդունման ու կիրարկման միջոցով, որը նպատակ ունի հաստատել ամուր միասնական սեփական որակի կառուցվածքի համակարգ, կառավարական ծրագրերի մշակում տեխնիկական կանոնակարգերի ու արդյունաբերական ապրանքների ստանդարտների ոլորտում, ու Առևտրի տեխնիկական խոչընդոտների ոլորտում գործող մարմինների հզորացում;
- Սանիտարական ու բուսասանիտարական ոլորտի քաղաքականության ու ինստիտուցիոնալ շրջանակի բարելավում ԵՄ համապատասխան դիրեկտիվներին ու ստանդարտներին համապատասխան Սննդի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության ընդունման

միջոցով և Սննդի անվտանգության պետական ծառայության կանոնադրության վերամշակում ու մոտարկում ԵՄ համապատասխան փորձին;

- Պետական ոլորտում Համակարգի ամբողջականության հզորացում Հակակոռուպցիոն ռազմավարության ընդունման միջոցով, մշտական ու անկախ Հակակոռուպցիոն խորհրդի հիմնադրում, ինչպես նաև Պետական խորհրդի՝ որպես պաշտոնական խորհրդատվական համակարգ Հայաստանի կառավարության ու ոչ պետական ոլորտի միջև, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ֆինանսական ու ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում, ինչպես նաև թափանցիկության օրենսդրության, շրջանակի, ստանդարտների վերանայում, սահմանային մարմինների համար արդիական վերապատրաստման ծրագրի ու դիտանցման մեխանիզմի մշակում՝ ԵՄ ու միջազգային լավագույն փորձին համապատասխան;
- Քաղաքացիական ծառայության համակարգի արդիականացում ԵՄ հանրային կառավարման սկզբունքներին համապատասխան՝ օրենսդրության մեջ կատարելով անհրաժեշտ բարեփոխումներ, ինչպես նաև բարեփոխումների ռազմավարության ընդունում ու իրականացում ԵՄ հանրային կառավարման սկզբունքներին համապատասխան: